ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը երաժշտություն առարկայի դասավանդման ընթացքում

Առարկա Երաժշտություն

Հեղինակ Լուսինե Իսաջանյան

Ուսումնական հաստատություն Դարբասի միջնակարգ դպրոց

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Կարինե Գրիգորյան

ԳՈՐԻՍ 2022

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1 Ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացման ուղիները----------4

Գլուխ 2 Խաղը որպես մանկավարժական հնարք ----------11

Եզրակացություն----------14

Գրականության ցանկ----------15

Ներածություն

<<Մեկ հասկացված, անկեղծ ձայն հազար ճառ կարժե, որովհետև ճառը պետք է մարսե հասարակությունը, որ կարենա անկե սնունդ առնել, ինչ-որ ժամանակներու գործ է: Իսկ ձայնը վայրկյանին կթափանցե մարդու կուրծքեն ներս և այնտեղ կհիմնե զգացման և մտքի վառարան>>:

Կոմիտաս

Երաժշտությունը, որպես ուսումնական առարկա կարևոր դեր ունի երեխայի՝ իբրև մարդ անհատի ձևավորման և զարգացման վրա տարբեր՝ գաղափարական, կամային, մտավոր, ստեղծագործական, բարոյական, գեղագիտական, հուզական որակներով: Պրոֆեսիոնալ աշխատանքը աշակերտների հետ նպաստում է նրանց ինքնարտահայտմանը և ստեղծագործական մտքի զարգացմանը: Երաժշտությունը անհնար է պատկերացնել առանց ստեղծագործ մոտեցման:

Աշխատանքի նպատակն է պարզ և մատչելի ձևով ներկայացնել մանկավարժական մեթոդները և տեխնիկաները՝ օգնելով առավել արդյունավետ իրականացնել իրենց գործունեությունը: Այն կնպաստի առավել կրթված հասարակության ձևավորմանը: Նպատակին հասնելու ձևակերպված խնդիրներն են.

■Ուսումնասիրել ուսուցչի դերը սովորողների ստեղծագործական կարողություն ների զարգացման գործում:

■Ուսումնասիրել խաղային տեխնոլոգիաների դերը դասի կազմակերպման մեջ:

■Ուսումնասիրել աշակերտների ինքնադրսևորմանը նպաստող մանկավարժական հնարքները:

Գլուխ 1

Ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացման ուղիները

Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցնում մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Եվ հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով նա ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է իրեն մանկության աշխարհ, որտեղ ապահով է, ծանոթ իրականանալի չկա որոշակի պարտականություններ և պահանջներ: Կրտսեր դպրոցականի զարգացման ընթացքում հստակ երևում են զարգացման որակական փոփոխություններ:Երեխայի հոգեկան զարգացման կենտրոնում հայտնվում կամածինության ձևավորումը պլանավորում, գործողությունների զարգացման ծրագիր, վերահսկողության իրականացում:

Այս տարիքի երեխայի զարգացման հիմնական բնութագրերից է այն,որ թեև կտրուկ փոխվում է գործունեության հիմնական ձևը, դեռևս պահպանվում է խաղալու պահանջմունքը: Այդ պատճառով դպրոցական կյանքի սկզբնական շրջանում շատ կարևոր է ուսումնական գործընթացում խաղային էլեմենտների առկայությունը, ինչը մեծացնում է երեխայի հետաքրքրությունը ուսման հանդեպ:

Մեծ է նաև շարժվելու պահանջմունքը, հետևաբար, ուսումնական գործընթացը կազմակերպելիս, անհրաժեշտ է կիրառել շարժողական խաղեր, որոնք նպաստում են ուշադրության զարգացմանը, կենտրոնանալու կարողությանը: Չափազանց կարևոր է նաև նոր տպավորություններ ստանալու պահանջը, որի հիման

վրա ձևավորվում են գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու պահանջը: Այս պահանջը առաջնորդում է երեխայի զարգանալու, դրդապատճառների նոր համակարգ ձևավորելու ընթացքը: Կարևոր դեր է խաղում սոցիալական դրդապատճառների ձևավորումը, որը ի հայտ է գալիս 2-3 դասարաններում: Աշակերտի համար կարևորվում են ուսուցչի գովասանքը, գնահատականը, ավելի ուշ հասակակիցների կարծիքը իր անձի վերաբերյալ: Այս ամենը նպաստում է երեխայի կողմից սոցիալական իր նոր դերերի գիտակցմանը, սեփական անձի ինքնահաստատմանը: Երեխայի մոտ հետաքրքրության պահպանման, Ես-ի ինքնահաստատման գործընթացում, չափազանց կարևոր է ուսուցչի դերը: Կրտսեր դպրոցականի մոտ առաջնային է նաև բարոյական դրդապատճառների ձևավորումը, ինչում կարևոր դեր են խաղում իդեալների ձևավորումը, որոնք կրում են շատ հստակ բնույթ/հիմնականում տարբեր գրքային կամ հեռուստատեսային հերոսներ/, փոփոխական են և ազդում են իրենց արտաքին կողմերով: Այս տարիքում ուսուցիչը երեխայի համար միակ և անկոտրում հեղինակությունն է:

Աշակերտի շփումը հիմնականում ուղղված է նրան, համադասարանցիներին, ում գնահատում է ուսուցիչը: Այդ պատճառով, ուսուցիչը որպես հեղինակություն կարող է ուղղորդել երեխայի հասարակական շփումները: Հետզհետե ավելանում է հասակակակիցների հետ շփվելու պահանջը, որի բավարարման ընթացքում երեխան սկսում է հասկանալ առկա կանոնները, միջանձնային շփման նրբությունները:

Ուսումնական գործունեությունը փոխում է երեխայի զգացմունքների բովանդակությունը, հետևապես դառնում են ավելի գիտակցված և զսպված:

Դրական զգացմունքները առաջանում են ոչ միայն հաճելի խաղ, խաղալուց և հաճույք ստանալուց, այլ որոշակի մտավոր գործունեություն կատարելուց, դժվարություններ հաղթահարելուց, մրցակցությունից: Կյանքի տարբեր սոցիալական դերերի ծանոթության միջոցով նրանց մոտ զարգանում են

բարոյական զգացմունքները: Տեղի է ունենում առկա բարոյական նորմերի, կանոնների ինտենսիվ ներքնայնացնում: Այս գործընթացում կարևորվում է մեծահասակի դերը, որը կարող է ներկայացնել երեխայի ընդունելի վարքաձևեր, նորմեր կանոններ, զարգացնել բարոյական ինքնագիտակցությունը: 8-9 տարեկանում ի հայտ է գալիս զգացմունքների տարբերակում՝ վատն ու լավը փոխարինվում են տարբեր զգացմունքների գիտակցությամբ և արտահայտությամբ: Զարգացնում են ինտելեկտուալ զգացմունքները՝ հետաքրքրությունը, զարմանքը, կասկածը ճանաչման հաճույքը և այլն:

Երաժտության մեկ դասաժամի ընթացքում իրականացվում է ուսումնական գործունեության մի քանի ձևեր:Սովորողների երաժշտական գործունեության բոլոր տեսակի աշխատանքների հիմքում երաժտության ակտիվ ընկալումն է, այն լսելու և նրա մասին մտորելու կարողության զարգացումը: Եթե տարրական դպրոցի սովորողի մոտ ուժեղ է երաժշտության ընկալման զգայական, հուզական կողմը /նա նկարագրում է միայն իր զգացողությունները և տպավորությունները/, ապա միջին դպրոցում զգայականին ավելանում է գիտցականը:

Զգայական պատկերային մտածողությունից սովորողն անցնում է իմացական հասկացություններին, որոնք կազմավորում են երաժշտական մտքի խորությունը, գիտակցությունը, ձևավորում ու զարգացնում են երեխայի ստեղծագործական կարողությունը:

Երաժշտություն առարկայի առաջարկվող գործունեության ձևերն են.

- Երաժշտական ստեղծագործության ունկնդրում և երաժշտության պատմություն
- Երգերի անհատական և խմբային կատարում
- Երաժշտառիթմական և պարային շարժում

■Անհատական ստեղծագործում կամ իմպրովիզացիա /շարժումային և երգային, հանպատրաստից հորինում/

■Ուսումնական էքսկուրսիաներ՝ թանգարաններ, համերգասրահներ և այլ մշակութային օջախներ:

Երաժշտության ունկնդրում և երաժշտության պատմություն.

Երաժշտության ունկնդրումը և ընկալումը բարդ գործընթաց է, որովհետև այն կախված է յուրաքանչյուր անհատի ներքին զգացողությունից, որը բացահայտելը, ձևավորելը և զարգացնելը բավականին դժվար է: Այն զարգացնում է ունկնդրելու կարողությունը, ուշադրությունը, վերլուծական ընդունակությունները և համեմատելու կարողությունը: Երաժշտության ունկնդրման միջոցով սովորողը ծանոթանում է նաև երաժշտության պատմությանը, ուսումնասիրում է ունկնդրվող ստեղծագործության ստեղծման պատմական ժամանակաշրջանը, կոմպոզիտորի ստեղծագործական գործունեության առանձնահատկությունները:

Սովորողը հասկանում է, որ ունկնդրել չի նշանակում լսել, պետք է ներկայացնել, մեկնաբանել, վերլուծել, երաժշտության ստացած տպավորությունները, դրսևորել հուզական արձագանք, ինքնուրույն կարծիք հայտնել, մենակ կամ խմբով ներկայացնել ուսումնասիրություններ, հետազոտական կամ նախագծային աշխատանքներ:

Անհատական և խմբային երգեցողությունը երեխաների ամենասիրելի գործունեության տեսակն է, որի ընթացքում զարգանում է նրա լսողությունը, ռիթմ և լադի զգացողությունը:Երգեցողությունից է երեխան ստանում իր առաջին երաժշտական տպավորություններն ու զգայական ընկալումը: Սկսած առաջին դասերից՝ պետք է երեխաներին սովորեցնել ճիշտ երգեցողության կանոնները, ձայնի դրվածքը, շնչառությունը, բառերի հստակ արտասանության, մաքուր ինտոնացիա և այլն: Խմբային երգեցողության միջոցով է ձևավորվում և զարգանում սովորողների երգչային ձայնածավալը, ճիշտ

շնչառությունը,ձայնակազմությունը, առոգանությունը, մաքուր ինտոնացիայով միաձայն /ունիսոն/ և երգձայն երգելու կարողությունը, անսամբլային զգացողությունը, որը հիմքեր է նախապատրաստում հետագայում խմբերգային երգեցողության համար: Վերջինս զարգացնում է մի շարք բարոյական արժեքներ՝բարություն, ընկերություն, հանդուրժողականություն, միասնություն, մեկը մյուսին լսելու, սեփական պարտականությունների նկատմամբ պատասխանատու վերաբերմունք դրսևորելու կարողությունը:

Երաժշտական շարժախաղերը կարևոր դեր են կատարում կրտսեր դպրոցականների շարժումային գործունեության զարգացման գործում:Դրանք լայն հնարավորություն են տալիս երեխաներին ցուցադրելու ինքնուրույնություն և ստեղծագործական երևակայություն:

Ֆրայերի մեթոդ



Նպաստել սովորողի մտահորիզոնի ընդլայնմանը երևակայության, ստեղծագործական և վերլուծական մտածողության զարգացմանը գեղագիտական և բարոյական չափանիշներին, հայրենասիրական և մարդասիրական զգացումների ձևավորմանը:

Երեխայի երևակայությունը հիմք է հանդիսանում նրա ինտելեկտի և սոցիալա-կան հմտությունների հետագա զարգացմանը, որպեսզի առավելագույնի հասցվի երեխայի մտավոր, հուզական և սոցիալական ներուժը, պետք է հասկանալ, թե ինչպես է գործում նրա երևակայությունը և ինչպե՞ս զարգացնել նրա ստեղծագոր-ծականությունը: Երեխան որն ի սկզբանե ունի զարգացած երևակայություն, շատ ավելի երջանիկ և ավելի ուշադիր է, քան իր հասակակիցները: Ինչպես նաև ավելի լավ է հաղթահարում դժվար իրավիճակներ:

Երեխաները բնածին սեր ունեն տարբեր պատմությունների հանդեպ: Պատմությունները նրանց խրախուսում են կիսել իրենց սեփական մտքերը և զգացմունքները: Քանի որ պատմությունները երևակայական են, երեխաները ոչ միայն լսում և պատմում են պատմություններ, այլև վերապրում են դրանք: Այսպես է զարգանում ստեղծագործականությունը նրանց մոտ: Անհատական ստեղծագործումը կամ իմպրովիզացիայի գլխավոր նպատակը սովորողների ստեղծագործական ունակությունների զարգացումն է:Կիրառվում են շարժումային, պարային երգչային և նվագարանային իմպրովիզացիաներ, փոքրիկ մեղեդիների հորինումներ, տրված անավարտ մեղեդու շարունակում և այլն: Իմպրովիզացիայի բոլոր միջոցները երեխաների մեջ զարգացնում են գեղարվեստական երևակայություն, ինքնուրույնություն, նպատակին հասնելու ձգտում, բարձրացնում երաժշտական գործունեության ակտիվությունը: Շատ կարևոր է նաև սովորողների երաժշտագեղագիտական ճաշակի և մտահորիզոնի ձևավորումը, որը իրականացվում է ուսումնական էքսկուրսիաների՝ /այդ թվում նաև վիրտուալ/ համերգասրահներ, թանգարաններ, թատրոններ, այցելության ընթացքում դրանք

կարելի է իրականացնել ակտիվացնելով թանգարանների կրթական ծրագրերի հետ համագործակցությունը: Կարևոր տեղ է գրավում նաև դպրոցական համերգների կազմակերպումը, որը ձևավորում է երաժշտություն ունկնդրելու սովորություն և միջոցառումներ կազմակերպելու փորձ:

Գլուխ 2

Խաղը որպես մանկավարժական հնարք:

Կրտսեր սովորողների անհրաժեշտ պարագաները տեղադրվում են խաղային գոտիներում, քանի որ այս տարիքի երեխաները երաժշտական գործունեության փորձ չունեն, նրանք երաժշտությանը հաղորդակցվում են միայն երաժշտադերային խաղերի միջոցով: Ստեղծագործական ինքնուրույնության առաջին ծիլերն ի հայտ են գալիս երաժշտության դասերին՝ գործունեության տարբեր տեսակների ընթացքում: Աշակերտները խաղերի ժամանակ հիմնականում ընդօրինակում են ուսուցչի գործողությունները, ձայնակցում երգերին, հատուկ ջանասիրությամբ կատարում պարային շարժումները: Կարելի է բեմականացնել փոքրիկ երաժշտական պատկերներ՝ խաղալիքների միջոցով կամ տիկնիկային թատրոնի կերպարներով:

Աշակերտները բեմականացնում են իրենց անցած հեքիաթներն ու երգերը, ունկնդրում երգեր կամ հեքիաթներ:

Երաժշտության կիրառումը խաղերի ընթացքում հարստացնում և խորացնում է խաղի բովանդակությունը: Երբեմն երաժշտությունը հանդես է գալիս որպես խաղի ձևավորում: Սյուժետադերային խաղերում երեխաները ներկայացնում են երաժշտական պարապմունքներից և տոներից ստացած իրենց տպավորություն-ները:

Երաժշտական խաղերի օրինակներ՝

<<Կարճ և երկար տևողություններ>>

Երեխաները երգում են <<Արև՛, արև՛>> երգը, միաժամանակ ծափում մեղեդու ռիթմը: Ուսուցիչն առաջարկում է կարճ հնչյունների ներքո վազել, իսկ երկարների քայլել: Երբ երեխաները հստակ պատկերացնում են կարճ և երկար տևողությունները, ուսուցիչն առաջարկում է մեղեդու կարճ հնչյունները

երգել<<վազել>>, իսկ երկարները՝<<քայլ>> բառերով: Այս խաղով հնչյունների տևողությունները դառնում են զգայական, ընկալումը՝ գիտակցական:

<<Վազք>>

Հնչում է արագ, աշխույժ երաժշտություն /օրինակ՝ Ա. Խաչատրյանի <<Սուսերով պարը <<Գայանե>> բալետից: Երաժշտության բնույթն առաջացնում է վազելու, թռչկոտելու ցանկություն, որի ընթացքում երեխան լիցքաթափվում է և աշխուժանում:

<<Երկու տրամադրություն>>

Իրար հետևից հնչում են երկու տարբեր տրամադրություն արտահայտող երաժշտություն, մեկը՝ ուրախ, մյուսը՝ տխուր: Երեխաները պետք է կարողանան ընկալել երաժշտության բնույթը և այն արտահայտեն ոչ միայն իրենց շարժումներով, այլև՝ դիմախաղով և /միմիկայով/:

[1] **Երաժշտառիթմիկ խաղ**

[1] https://youtube.com/watch?v=IMovt92C_2s&feature=share&si=EMSIkaIECMiOmarE6JChQ

Երաժշտառիթմիկ խաղ ծափերով

2

[2] https://youtube.com/watch?v=IMovt92C_2s&feature=share&si=EMSIkaIECMiOmarE6JChQ

Եզրակացություն

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կատարած մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացությունների.

■կարևոր է ուսուցչի մասնագիտական կարողությունների շարունակական բարելավումը և կատարելագործումը, ինչպես դասավանդող առարկայի, այնպես էլ մանկավարժության:

■կարևոր է սովորողի մոտ ի սկզբանե զարգացնել ինքնուրույնություն և ստեղծագործական մտածողություն, զանազան մեթոդների և գիտելիքների կիրառմամբ:

■ նորանոր մանկավարժական հնարքների և հմտությունների ձեռքբերումը, և դրանց պրակտիկ կիրառումը որոշիչ նշանակություն ունի էֆեկտիվ դասերի կազմակերպման համար:

■ուսման պրոցեսում կարևոր է նաև խաղերի՝ որպես դասավանդման հնարք կիրառելը;

■Սերը գեղեցիկի հանդեպ ձևավորվում էմանկական տարիքում: Երաժշտության կոլեկտիվ դասավանդումը անկասկած նպաստում է գեղագիտական ճաշակի ձևավորմանը: Իսկ դա շատ կարևոր է առավել գրագետ և կրթված հասարակություն ունենալու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1.Լ.ՍՎիգոտսկի<<Երևակայությունը և ստեղծագործությունը մանկության մեջ / Լ.Տ Վիգոտսկին:Մ.1981

2.Կ. Ղազարյան Կրտսեր տարիքի երեխաների ինքնուրույն երաժշտական գործունեությունը // Նախաշավիղ-2016թ.

3.Յու. Վ. Յուզբաշյան,ԱԱ Փահլևանյան <<Երաժշտությունը առաջինից չորրորդ դասարաններում-2001:

Օգտագործված հղումների ցանկ

https://escs.am

https://youtube.com/watch?v=IMovt92C_2s&feature=share&si=EMSIkaIECMiOmarE6JChQ